Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Գյումրի քաղաքի խնամքի կենտրոնի վերանորոգում»
ծրագրի ստորագրման արարողություն

2023 թվականի օգոստոսի 22-ին Գյումրու խնամքի կենտրոնում տեղի ունեցավ «Գյումրու խնամքի կենտրոնի բարելավման ծրագրի»՝ մինչև 66,137 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը ստորագրվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և Հայկական Կարմիր Խաչի ընկերության գլխավոր քարտուղար տիկին Աննա Եղիազարյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ պարոն Վահագն Մկրտչյանը, Գյումրու խնամքի կենտրոնի տնօրեն Գինուշ Զատիկյանը, Հայկական Կարմիր Խաչի ընկերության Շիրակի մասնաճյուղի նախագահ Սամվել Մադոյանը, ինչպես նաև քաղաքապետարանի պաշտոնյաներ և խնամքի կենտրոնի անձնակազմը:

Այս ծրագրի նպատակն է բարելավել տարեցների և հաշմանդամների կենցաղային միջավայրը՝ կենտրոնի մասնակի վերանորոգման և կահույքի ապահովման միջոցով: Արդյունքում տարեկան մոտ 160 բնակիչ կշահի ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի և տիկին Եղիազարյանի միջև դրամաշնորհային պայմանագրի ստորագրում

Դեսպան Ֆուկուշիման և դոկտոր Եղիազարյանը

Դեսպան Ֆուկուշիմայի, տիկին Զատիկյանի և տիկին Եղիազարյանի (դիմաց, ձախից) շրջայցը Գյումրու խնամքի կենտրոնում

Կենտրոնի միջանցքը, որը կվերանորոգվի նախագծով